ԿԱՐԾԻՔ

Սաթենիկ Ավագի Տեփանյանի

«Անձի ինքնության, հանդուրժողականության և էքզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրում» խորագրով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԹ.00.01 *«Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն»* մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Ներկայացվող ատենախոսությունը նվիրված է հանդուրժողականության հիմնախնդրին ազգային միատարր և բազմատարր միջավայրերում՝ պայմանավորված անձնային այնպիսի առանձքային գործոններով, ինչպիսիք են անձի նույնականությունը/ինքնությունը և էքզիստենցիալ ամբողջականությունը: Ատենախոսության մեջ բարձրացված հետազոտական խնդիրները հնարավորություն են տալիս դիտարկելու հանդուրժողականության հիմնախնդիրը բոլորովին նոր դիտանկյունից: Ավանդաբար հանդուժողականությունը ուսումնասիրվել է սոցիալական վարքի, համոզմունքների և դիրքորոշումների միջոցով՝ պայմանավորված սոցիալ-մշակութային համատեքստով: Ի տարբերություն ընդունված մոտեցումների, սույն աշխատանքի մեջ փորձ է կատարվում ուսումնասիրել անձի հանդուժողականությունը անձնային ինքնության և էքզիստենցիալ բնութագրերի փոխկապվածության տեսանկյունից: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս ընդլայնելու հանդուրժողականությանը նպաստող գործոնների ուսումնասիրությունը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ հիմնախնդրի այսպիսի դրվածքը բավականին հավակնոտ և բարդ խնդիր է հետազոտողի համար: Անձի ինքնությունը և էքզիստենցիալ բնութագրերը համալիր գործոններ են և այդ տեսանկյունից պարունակում են եզրույթների կոնցեպտուալիզացիայի և օպերացիոնալիզացիայի դժվարություններ: Սակայն ատենախոսը կարողացել է իրականացնել վերոնշյալ երևույթների համակարգված

վերլուծություն՝ անդրադառնալով առանձքային դասական և ժամանակից աղբյուրներին ատենախոսության տեսական գլուխներում:

Աշխատանքը բաղկացած է երկու տեսական և մեկ՝ հետազոտության մեթոդաբանությունը և արդյունքները լուսաբանող գլուխներից: Տեսական առաջին գլխում անդրադարձ է կատարվում անձի ինքնության և հանդուրժողականության տեսական-մեթոդական հիմքերին: Անդրադարձ է կատարվել ինքնության երևույթի վերաբերյալ հիմնական գիտական մոտեցումներին հոգեբանական տարբեր՝ այդ թվում հոգեվերլուծական, սոցալ-կոգնիտիվ, սոցիալ-կոնստրուկտիվիստական, տեսությունների և ավանդույթների ներքո: Անդրադարձ է կատարվել նաև հանդուրժողականությունը բացատրող տարբեր մոդելներին և մոտեցումներին: Առաջին գլխում նաև դիտարկվել է երիտասարդների զարգացման առանձնահատկությունները, ամփոփ վերլուծվել են երիտասարդների հանդուրժողականության և նույնականության հարցերին վերաբերող ուսումնասիրություններ: Ատենախոսության երկրորդ գլխում քննարկվել են էքզսիտենցիալ հոգեբանության կոնցեպտուալ հիմքերը, ինչպես նաև անձի էքզսիտենցիալ բնութագրերին ուղղված ուսումնասիրություններ: Առանձին կերպով անդրադարձ է կատարվել հայերի և ռուսների էթնոհոգեբանական առանձնահատկություններին՝ պայմանավորված սոցալ-մշակութային միջավայրի ազդեցությամբ: Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվել է հետազոտության մեթոդաբանությունը, ներկայացվել են այն մեթոդիակները, որոնք կիրառվել են հարցման մեջ, ինչպես նաև արդյունքների վերլուծության տրամաբանությունը և մեթոդները: Կիրառվել են բազմակի գործիքներ, որոնք թույլ են տվել համակողմանի վերլուծել ստացված արդյունքները: Արդյունքների վերլուծության համար նույնպես կիրառվել են մաթ. վիճակագրության տարբեր մեթոդներ (նկարագրական վիճակագրության մեթոդներ, կորելյացիոն վերլուծություն, ռեգրեսիոն վերլուծություն): Այսպիսով, ատենախոսության կառուցվածքի և բովանդակության մեջ հստակ արտացոլվում են ուսումնասիրության նպատակին և խնդիրներին համապատասխան վերլուծությունները և մեկնաբանությունները:

Ատենախոսության մեջ ձևակերպված է նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև ներկայացված է արդյունքների հիման վրա մշակված պրակտիկ աշխատանքի ծրագիր:

Հարկ է նշել, որ ատենախոսությունը շարադրված է գրագետ, գովելի է ատենախոսի հետևողականությունը արդյունքների մանրամասն ներկայացման և վերլուծության մեջ: Ատենախոսության հետ ներկայացվող սեղմագիրը ամբողջովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը, հիմնական դրույթները և եզրակացությունները:

Այնուհանդերձ աշխատանքում կան որոշ դիտարկումներ և ցանկություններ.

1. *Վարկածի ձևակերպումը*. Քանի որ ներկայացված է ընդհանուր և մասնավոր վարկածներ, անհրաժեշտ էր, որ մասնավոր վարկածներում հստակ նշվեր թե ո՞ր փոփոխականների միջև են ենթադրվում կապերը կամ տարբերությունները, այնինչ որպես ենթադրություններ բոլոր ենթավարկածներում նշվում են որոշակի կապեր կամ որոշակի տարբերություններ: Այսպիսի ձևակերպումը թույլ չի տալիս ըմբռնել, թե հատկապես կոնկրետ որ փոփոխականների միջև են ենթադրվում տարբերություններ խմբերում կամ փոխկապվածություններ :

2. *Պաշտպանության ներկայացվող դրույթներ*. Տպավորություն է, որ առաջին երեք դրույթները բխում եմ տեսական վերլուծությունից, սակայն, ցանկալի կլիներ, որ պաշտպանության ներկայացվող դրույթները բխեին ստացված արդյունքներից և եզրակացություններից: Չորրորդ դրույթը ունի հստակեցման կարիք, քանի որ նույնպես, ինչպես վարկածում, չեն նշվում կոնկրետ թե ինչպիսի փոխկապակցվածություններ են դուրս բերվել:

3. *Ռեգրեսիոն վերլուծության արդյունքների մեկնաբանություն*. Ցանկալի կլիներ, որ ռեգրեսիոն վերուծության արդյունքները ենթարկվեին ավելի խորքային բովանդակային մեկնաբանության: Օրինակ, ստացված արդյունքների հիմնավորման համար ցանկալի կլիներ դիտարկել այլ ուսումնասիրություններ և համեմատել ստացված արդյունքները: Միևնույն ժամանակ, կարևոր կլիներ մեկնաբանել հայազգի և ռուսազգի երիտասարդների այլ ցուցանիշների հետ՝ հիմնվելով առկա ուսումնասիրությունների վրա և ցույց տալով ստացված տարբերությունների հնարավոր սոցիալ-մշակութային գործոնների և մշակութային համատեքստի ազդեցությունը: Կարելի էր նաև ռեգրեսիոն մոդելներում որպես վերահսկվող գործոններ դիտարկել ժողովրդագրական փոփոխականները՝ փոփոխականների կանխորոշիչ ազդեցությունները ավելի տարբերակված մեկնաբանելու համար:

4. *Մեթոդիկաների բազմազանությունը.* կիրառվել են շատ մեթոդիկաներ, օրինակ՝ «մշակութային-արժեքային պոտենցիալ», «հատկանիշների վերագրում» մեթոդիկան, «անձնային ինքնություն» մեթոդիկան, «Ո՞վ եմ Ես» մեթոդիկան: Հստակ չի երևում այս մեթոդիկաների կիրառման նպատակը աշխատանքում առաջադրված վարկածի և ենթավարկածների կոնտեքստում: Ցանկալի կլիներ, որ բացի խմբերի միջև համեմատությունից, վերոնշյալ գործիքների միջոցով ստացված արդյունքները կիրառվեին կորելյացիոն և ռեգրեսիոն վերլուծության արդյունքների մեկնաբանության մեջ, ինչը կհարստացներ աշխատանքը:

5. *Գործնական աշխատանքի ծրագիր.* Գովելի է, որ աշխատանքի արդյունքում ներկայացվում է գործնական աշխատանքի ծրագիր, սակայն աշխատանքում չի երևում և չի հիմնավորվում, թե ինչպես է մշակվել ծրագիրը, ինչպես են ստացված արդյունքները և եզրակացությունները հիմք հանդիսացել մշակված ծրագրի համար:

Վերոնշյալ դիտարկումները չեն իջեցնում աշխատանքի արժեքը:

Այսպիսով, ատենախոսի կողմից ներկայացվող «*Անձի ինքնության, հանդուրժողականության և էքզիստենցիալ ամբողջականության փոխկապակցվածությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրում*» ատենախոսությունը ամբողջական և ավարտում գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետին, այն է՝ գիտական կարևոր խնդրի առաջադրում, իսկ Սաթենիկ Ավագի Տեփանյանը արժանի է ԺԹ.00.01 «*Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն*» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ հ.գ.թ., դոցենտ Նարիեն Խաչատրյան

Ն. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար՝ բ.գ.թ., դոցենտ Մերի Հովհաննիսյան

07.03.2026